ՀԱՅԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ

Նոր ձևով աշխատանքի տարին ցույց տվեց, որ Կոմունիստական պարտիայի նախաձեռնությամբ կենսագործված և սովետական ժողովրդի հավանությանն արժանացած՝ արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը տերիտորիալ սկզբունքով, ամբողջովին և լիովին իրեն արդարացրել է։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի օրենքներին համապատասխան տնտեսական վարչական շրջանների ստեղծումը և նրանց մեջ ձեռնարկությունների ու կառույցների անմիջական ղեկավարության օրգանների՝ ժողովրդական տնտեսության խորհուրդների կազմումը, գերատեսչական պատնեշների վերացումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին և երևան հանեցին արդյունաբերական արտադրանքի արտադրության ավելացման ամենահարուստ ռեզերվները՝ արտադրական տարածությունների և սարքավորման լավագույն օգտագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, արդյունաբերական ձեռնարկությունների մասնագիտացման և կոոպերացման, նոր տեխնիկայի արմատավորման միջոցով։

Ժողովրդական տնտեսության կառավարումը վերակառուցելու գործում իրենց հետագա զարգացումը գտան դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքները։ Դա բարձրացրեց աշխատավորների ստեղծագործական ակտիվությունը տնտեսության կառավարման գործում։

Ժողովրդական տնտեսության կառավարման նոր ձևերը նպաստում են բոլոր միութենական ռեսպուբլիկաների, ողջ Սովետական Միության էկոնոմիկայի հետագա հզոր վերելքին։ Այդ մասին պերճախոս կերպով վկայում են ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1957 թվականի և 1958 թվականի առաջին եռամսյակի պլանների կատարման արդյունքները։ Այդ մենք տեսնում ենք նաև Հայկական տնտեսական վարչական շրջանի ժողովրդական տնտեսության սիստեմում միավորված արդյունաբերության աշխատանքի օրինակից։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունը միավորում է 221 գործող և 32 կառուցվող արդյունաբերական ձեռնարկություններ, 37 պտղաբուծա-այգեգործական և անասնագիրացման սովխոզներ, գիտա-հետազոտական և նախագծային ինստիտուտներ, տրանսպորտային, մատակարարման-վաճառահանման և այլ կազմակերպություններ։ Ժողտնտխորհին կից գոյություն ունի Տեխնիկա-տնտեսական խորհուրդ, բաղկացած 9 սեկցիաներից, որոնց մեջ մտնում են 174 անդամ՝ ռեսպուբլիկայի առաջավոր բանվորների և արտադրության նորարարների, գիտնականների, ձեռնարկությունների ինժեներա-տեխնիկական աշխատողների, պարտիական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների թվից։

Ժողտնտխորհի ձեռնարկությունների թողարկած համախառն արտադրանքի ծավալը հասնում է 5,5 մլրդ. ռուբլու և կազմում է Հայկական ՍՍՌ արդյունաբերության ողջ արտադրանքի ընդհանուր ծավալի 81 տոկոսը։

Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը և Սովետական իշխանության հաստատումը ապահովեցին Հայաստանի էկոնոմիկայի բուռն վերելքը։ Բավական է նշել, որ ներկայումս ռեսպուբլիկայում թողարկվում է 45 անգամ ավելի արտադրանք, քան 1913 թվականին, նախառևոլյուցիոն Հայաստանում։

Հայկական տնտեսական վարչական շրջանի արդյունաբերության տարբերիչ գիծն այն է, որ

աճի բարձր տեմպերի հետ հավասարապես, նա հիմնվում է հարուստ տեղական միներալային ու ջրա-էներգետիկ ռեսուրսների վրա և դրանք լայնորեն օգտագործում. հանդիսանալով բազմաճյուղային, նա թողարկում է արտադրանքի հարյուրավոր կարևորագույն տեսակներ։ Բազմազան արդյունաբերության կառավարման համար ռեսպուբլիկայի Ժողովրդական տնտեսության խորհրդի կազմում գործում են տասս արտադրական ճյուղային վարչություններ՝ էներգետիկ, Գունավոր մետալուրգիայի և հանքագործական արդյունաբերության, Քիմիական արդյունաբերության, Մեքենաշինության և հաստոցաշինության, էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության, Շինարարական նյութերի արդյունաբերության, Թեթև արդյունաբերության, Սննդի արդյունաբերության և Մսի-կաթի արդյունաբերության։

Էներգետիկ վարչությունը միավորում է ռեսպուբլիկայի բոլոր խոշոր հիդրոկայանները և ապահովում ողջ ժողովրդական տնտեսության էլեկտրաէներգիայի պահանջները։

Գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունները թողարկում են էլեկտրոլիտիկ պղինձ, ալյումինիում, մոլիբդենի ու ցինկի կոնցենտրատներ, ոսկի ու արծաթ։

Քիմիական արդյունաբերությունը, հանդիսանալով ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության կարևոր ճյուղերից մեկը, երկրին մատակարարում է ազոտային և ֆոսֆատային պարարտանյութեր, կալցիումի կարբիդ և նրա ածանցյալները, ծծմբական և աղային թթուներ, ավտոդողեր և ռետինա-տեխնիկական առարկաներ, զանազան ներկեր, քացախաթթու, պոլիվինիլային սպիրտ, ժապավեններ և շատ ուրիշ նյութեր։

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության վարչության ձեռնարկությունները, բացի փոխադրովի էլեկտրակայաններից, գեներատորներից, տրանսֆորմատորներից, էլեկտրաշարժիչներից, ճշգրիտ էլեկտրաչափիչ և պիրոմետրիական գործիքներից, թողարկում են նաև կաբելային ապրանքներ, զարթուցիչ ժամացույցներ և այլն։

Հաստոցաշինությունն ու մեքենաշինությունը բնութագրվում են մետաղահատ հաստոցների, գործիքեղենի, զանազան սարքավորման, ինչպես նաև տնային գործածության առարկաների արտադրությամբ։

Շինարարական նյութերի արդյունաբերությունը, ցեմենտի, շիֆերի, կրի, հրահետ և ապակե շինվածքների հետ հավասարապես թողարկում է հիանալի որակով որմնանյութեր՝ տուֆեր, բազալտներ, գրանիտներ, մարմարներ և այլն, որոնք օգտագործվում են ոչ միայն Հայաստանի, այլև հարևան ռեսպուբլիկաների կառույցների համար։

Բամբակե, մետաքսե և բրդե գործվածքները, տրիկոտաժային, գուլպայի և կարի ապրանքները, կոշկեղենն ու գալանտերեայի ապրանքները, որոնք թողարկում է Ժողտնտխորհի թեթև արդյունաբերությունը, զգալի չափով կիրառություն են գտնում երկրի մյուս տնտեսական շրջաններում։

Սննդի արդյունաբերությունը, որ թողարկում է մթերային ապրանքների լայն ասորտիմենտ, ռեսպուբլիկայի սահմաններից դուրս արտահանում է հայտնի բարձրորակ դինիներ ու կոնյակներ, մրգեղենի պահածոներ, հանքային ջրեր, ծխախոտ և այլն։

Ռեսպուբլիկայում ծանր արդյունաբերության ձեռնարկությունների միջոցով թողարկվող արտադրանքի զգալի մասը նույնպես ուղարկվում է ՍՍՌ Միության տարբեր ծայրերը։ Հայաստանի Ժողտնտխորհը տնտեսական ուղղակի կապեր ունի երկրի բոլոր տնտեսական վարչական շրջանների հետ։ Բացի դրանից, Սովետական Միության սահմաններից դուրս, 31 արտասահմանյան երկրներ են արտահանվում ավելի քան 100 տարատեսակ արդյունաբերական ապրանքներ, այդ թվում՝ փոխադրովի էլեկտրակայաններ, գեներատորներ, էլեկտրաշարժիչներ, ուժային տրանսֆորմատորներ, ճշգրիտ չափիչ գործիքներ, խառատային պտուտակահան հաստոցներ, պոմպեր, կոմպրեսորներ, ինչպես նաև զանազան քիմիկատներ, գործվածքներ և գինե-կոնյակային ապրանքներ։

Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը իր բեղմնավոր ազդեցությունը գործեց նաև Սովետական Հայաստանի հետագա զարգացման և Սովետական Միության արտաքին տնտեսական կապերին ավելի ակտիվ կերպով մասնակցություն ցույց տալու

վրա։ Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում հանրապետության արդյունաբերական արտադրանքի արտահանումը 4,7 անգամ գերազանցել է անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի արտահանման ծավալից։

Հաջողությամբ կատարելով 1957 թվականի առաջադրանքները, հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ տարվա առաջին կիսամյակում նոր հաջողությունների հասան։ Ժողտնտխորհին ենթակա արդյունաբերությունը արդյունաբերական արտադրանքի թողարկման պլանը կատարել է 105,5 տոկոսով։ Պլանից դուրս թողարկվել է ավելի քան 130 միլիոն ռուբլու արտադրանք։

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում արտադրանքի ծավալը 1957 թվականի համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ մեծացել է 13,7 տոկոսով։ Ամենաբարձր տեմպերով են զարգանում մեքենաշինությունն ու հաստոցաշինությունը, սարքաշինությունը, էլեկտրատեխնիկական ու քիմիական արդյունաբերությունը, շինարարական նյութերի արդյունաբերությունը, ինչպես նաև մսի-կաթի արդյունաբերությունը։

Գերակատարվել է աշխատանքի արտադրողականության բարձրացման պլանը։ Անցյալ տարվա համեմատությամբ աճը հասնում է 8 տոկոսի։ Գերակատարվել է նաև թողարկվող արտադրանքի ինքնարժեքի իջեցման առաջադրանքը։ Զգալիորեն իջեցվել են թողարկված ապրանքային արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող ծախսումները։ Բարձրացել է արդյունաբերության շահութաբերությունը։

Իր գործունեության առաջին իսկ օրերից Ժողտնտխորհը հատուկ ուշադրություն է հատկացրել և հատկացնում է թողարկվող արտադրանքի տրակի բարձրացմանը, նրա ասորտիմենտի ընդլայնմանը, ինչպես նաև ապրանքների նոր տեսակների յուրացմանը։ Անցած տարում յուրացվել են նոր արտադրանքի տասնյակ տեսակներ, այդ թվում՝ էլեկտրամեքենաներ, զանազան գործիքներ, նոր քիմիական պրոդուկտներ, մետաղամշակման հաստոցներ և ժողովրդական սպառման մի շարք առարկաներ։

Ժողտնտխորհի գիտա-հետազոտական և նախագծային կոնստրուկտորական ինստիտուտները, գործարանային լաբորատորիաները շարունակ ընդլայնում են իրենց գործունեությունը նոր, ավելի կատարյալ և բարձր արտադրողականության մեքենաների ու սարքավորման, ինչպես նաև ժողովրդական սպառման արդյունաբերական ու մթերային ապրանքների արտադրությունը յուրացնելու համար։

Գիտա-հետազոտական և փորձնական աշխատանքներում կարևոր տեղ են գրավում մեր հանրապետության ընդերքի հարստությունների կոմպլեքսային օգտագործումը, արտադրության մնացուկների նվազեցումը և նրանց ռացիոնալ օգտագործումը, ինչպես նաև ավտոմատացման, մեքենայացման և արտադրության մեջ նոր, ավելի պրոգրեսիվ տեխնոլոգիական պրոցեսների արմատավորման հարցերը։

Ինչպես հայտնի է, արդյունաբերության մասնագիտացումը, որը հիմնված է աշխատանքի լայն բաժանման վրա, հնարավորություն է տալիս զգալիորեն իջեցնել աշխատանքի ծախսումները արտադրանքի պատրաստման վրա, նրա ինքնարժեքը և պայմաններ է ստեղծում արտադրանքի որակը խիստ կերպով բարելավելու համար։ Տնտեսական շրջանի ներսում լայն կոոպերացիան հնարավորություն է տալիս տեղերում ավելացնել արտադրանքի թողարկումը և վերջ տալ ավելորդ տրանսպորտային փոխադրումներին։

Ելնելով դրանից և կենսագործելով պարտիայի ու կառավարության դիրեկտիվները, Ժողտնտխորհը որոշակի աշխատանք է կատարել և կատարում է մեր հանրապետության ներսում, արդյունաբերական ձեռնարկությունների մասնագիտացման և կոոպերացման գծով։

Անցած ժամանակաշրջանում Ժողտնտխորհը մասնագիտացրել է 13 արդյունաբերական ձեռնարկություններ։ Տնտեսական շրջանի ներսում ձեռնարկությունների կոոպերացման գծով ձեռք առնված միջոցները թույլ տվեցին դադարեցնել երկրի հեռավոր շրջաններից ներմուծվող բազմաթիվ կոմպլեկտավորող դետալներն ու նյութերը, ինչպիսիք են՝ էլեկտրաշարժիչներ՝ մեքենաների ու հաստոցների կոմպլեկտավորման համար, կարգավորման գործիքներ, զանազան պլաստմասսաներ, կերամիկական, ռետինատեխնիկական և այլ ապրանքներ։

Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի և Հայաստա-

նի Արհեստակցական միությունների խորհրդի որոշմանը համապատասխան, ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը Ժողտնտխորհի ձեռնարկություններում ստուգատես-կոնկուրս է անցկացվել գյուտարարական և ռացիոնալիզատորական աշխատանքի բնագավառում եղած լավագույն առաջարկությունների համար։

Ստուգատես-կոնկուրսի անցկացման ժամանակաշրջանում ձեռնարկությունները զգալի չափով բարելավել են իրենց աշխատանքը գյուտարարության և ռացիոնալիզացիայի գծով, ընդ որում ներգրավել են երեք հազարից ավելի բանվորներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ և ծառայողներ։

Միայն 1958 թվականի առաջին եռամսյակում ստացվել են 4796 առաջարկություններ, որոնցից ընդունվել են 4407, այդ թվում՝ արմատավորվել են 2543։

Արտադրության մեջ առաջարկությունների արմատավորումից ստացված տարեկան պայմանական տնտեսումը կազմում է 53,5 մլն. ռուբլի։

Ժողովրդական տնտեսության կառավարման վերակառուցումը, արդյունաբերական ճյուղային մինիստրությունների վերացումը խիստ բարենպաստ պայմաններ ստեղծեցին ոչ միայն մեքենաների ու սարքավորման արտադրական կարողությունների ու շինությունների լավագույն, լիարժեք օգտագործման համար, այլև զարկ տվեցին տեղական օրգանների նախաձեռնությանը երկրի տնտեսական շինարարության, էկոնոմիկայի զարգացման գործում։

Այսպես, ՀԿՊ Կենտկոմի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի օգնությամբ մի շարք նոր արդյունաբերական ձեռնարկություններում, այդ թվում՝ Երևանի, Լենինականի և Կիրովականի սարքաշինական, Սևանի գործադիր մեխանիզմների, Արզնիի կոմունդի քարերի, Լուսավանի և Երևանի հաստոցաշինական, Կիրովականի փոքր կաբարիտների ճշգրիտ հաստոցների, փոշե մետալուրգիայի և այլ ձեռնարկություններում երևան են հանվել չօգտագործվող կամ թերի օգտագործվող արտադրական շինություններ։

Շինությունների հայտնաբերման և արտադրական նպատակներով նրանց օգտագործման աշխատանքը շարունակվում է։ Ներկայումս Ժողտնտխորհում քննարկվում է Ստեփանավանում, Գորիսում, Դիլիջանում և մի քանի այլ վայրերում, որտեղ արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած, նոր արտադրություններ կազմակերպելու հարցը։

Դրա հետ միասին, տեղական հումքային ռեսուրսների լավագույն օգտագործման և մեր տնտեսական շրջանի ներսում արտադրության ավելի լիարժեք կոոպերացման նպատակներով նախագծվում է մի ամբողջ շարք արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը, այդ թվում՝ Բասարգեչարի և Ավանի լեռնագործական, Իջևանի գորգի և սարքաշինական ձեռնարկությունների, ինչպես նաև արդյունաբերության թեթև և սննդի ճյուղերի գծով։

Նոր արտադրությունների կազմակերպման և նրանց տեղաբաշխման հարցերը որոշելիս Ժողտնտխորհը ելնում է բնական ռեսուրսները առավելագույն չափով օգտագործելու և արդյունաբերությունը հումքի աղբյուրներին մոտեցնելու անհրաժեշտությունից։ Հաշվի է առնվում մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա չպահանջող, բայց որակյալ աշխատանքի և արտադրության բարձր կուլտուրայի հետ կապված արտադրությունների զարգացումը, ինչպես նաև արդյունաբերության այն բնագավառներում, որտեղ նա բավականաչափ զարգացած չէ։

1958 թվականի կապիտալ ներդրումների պլանը Ժողտնտխորհի գծով գերազանցում է 1957 թվականի փաստացի մակարդակից ավելի քան 30 տոկոսով։ Արդյունաբերական շինարարության հետ հավասարապես հատուկ ուշադրություն է հատկացվում բնակարանային շինարարության ընդլայնմանը, որի ծավալը ընթացիկ տարում 1957 թվականի մակարդակից գերազանցում է 67 տոկոսով՝ հատկացված գումարների գծով և երկու անգամ՝ շահագործման հանձնված բնակելի տարածության գծով։

Ընթացիկ տարում գործի կդրվեն մի շարք նոր արդյունաբերական ձեռնարկություններ և խոշոր արտադրական ցեխեր՝ օգտագործվող տարածությունների վրա, այդ թվում՝ հաստոցաշինական և սարքաշինական գործարաններ՝ ռելեների թողարկման համար, էլեկտրալամպերի գործարանի ապակեձուլման ցեխը, նոր արտադրական կարողություններ՝ Արարատի ցեմենտաշիֆերային և Քաջարանի պղնձամոլիբդենային

կոմբինատներում, Երևանի կաբելի գործարանում, «Պոլիվինիլացետատ» գործարանում և այլն։

Ժողտնտեսության ուշադրության կենտրոնում է գտնվում այն միջոցառումների կենսագործումը, որոնք բխում են ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Մայիսյան պլենումի որոշումից։ Սկսվել են քիմիական արդյունաբերության գործող ձեռնարկությունների շինարարության աշխատանքները։

Սովետական Հայաստանի էկոնոմիկայի զարգացման կարևորագույն միջոցառումներից մեկը հանդիսանում է Վարդաղաղ—Աղստաֆա—Երևան գազամուղի շինարարությունը՝ եղբայրական Ադրբեջանից Հայաստանին բնական գազ մատակարարելու համար։ Դա թույլ կտա քիմիական արդյունաբերության կարևորագույն ճյուղերում գործածել հումքի նոր, ավելի էժան տեսակ։ Նախատեսվում է, մասնավորապես, բնական գազից ստանալ սինթեզի գլխավոր սկզբնական պրոդուկտներ՝ ացետիլեն և ջրածին։ Դա թույլ կտա ոչ միայն մոտավորապես երկու անգամ ավելացնել սինթետիկ կաուչուկի, վինիլացետատի, քացախաթթվի, այլև սինթետիկ պրոդուկտների նոր տեսակների՝ ացետիլ ցելյուլոզայի թողարկումը։ Այդ բազայի վրա թողարկվելու են ացետատային մետաքս, մանրածակոտկեն ռետին և արհեստական կաշի, պոլիքլորվինիլային խեժ և պլաստմասսայի զանազան արտադրանք, այնպիսի արժեքավոր քիմիկատներ, ինչպես վինիֆլեքս, պոլիվինիլ բուտիրալ, մեթանոլ և այլն։

Նախատեսվում է նաև կապրոնային կորդի և արհեստական կորոնդի արտադրության կազմակերպումը։ Սինթետիկ հումքի աճին համապատասխան միջոցներ են ձեռք առնվում թեթև արդյունաբերության կարողությունները՝ կոշկեղենի և հագուստեղենի, մետաքսի գործվածքների, տրիկոտաժային և դուլպայի ապրանքների արտադրությունն ընդլայնելու համար։

Հզոր էներգետիկ բազա ստեղծելու և Սևանա լճի ջրերի դարավոր պաշարները տնտեսողաբար ծախսելու հարցերը միշտ եղել են և մնում են ռեսպուբլիկայի պարտիական ու տնտեսական կազմակերպությունների հատուկ հոգատարության առարկան։ ՍՍՌՄ Մինիստրների Սովետը, քննարկելով այդ հարցը, ընդունեց «Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության էներգետիկ բազայի մասին» որոշումը, որը բացառիկ կարևոր նշանակություն ունի ոչ միայն ռեսպուբլիկայի էներգետիկայի, այլև ողջ տպոսմրկայի ու կուլտուրայի զարգացման համար։ Այդ որոշումը նախատեսում է Սևան—Հրազդան կասկադի Աթարբեկյանի և Երևանի հիդրոէլեկտրակայանների շինարարության արագացումը, Որոտան գետի վրա Տաթևի հիդրոէլեկտրակայանի, Երևանում և Ախտայում բնական գազով գործող կենտրոնական ջերմային էլեկտրակայանների (ՏԷՑ) կառուցումը։ Էլեկտրաէներգիայի նոր աղբյուրների հրևան գալու կապակցությամբ, 1965 թվականից սկսած, կդադարեցվեն Սևանա լճի ջրերի բացթողումները էներգետիկայի կարիքների համար։ Ժողովրդական տնտեսության խորհուրդը ձեռնամուխ է եղել այդ կարևոր միջոցառումները լիովին և ժամանակին կենսագործելու համար։

Գունավոր մետալուրգիայի բնագավառում առաջնահերթ խնդիրն է ընդլայնել գործող կարողությունները և ստեղծել նորերը՝ տեղական մինեբալային հումքի արդյունահանման ու վերամշակման համար։ Արդյունահանվող ու վերամշակվող հանքանյութերից, բացի գլխավոր գունավոր մետաղներից՝ պղնձից, մոլիբդենից, կապարից, ոսկուց և արծաթից, ապահովել նաև այն արժեքավոր հազվագյուտ և ցրված էլեմենտները, առաջին հերթին սելենը, տելուրը, գերմանիումը, ռենիումը և այլն, որոնք պարունակվում են այդ հանքանյութերում և կարևոր նշանակություն ունեն ժամանակակից տեխնիկայի՝ էլեկտրոնիկայի, միջուկային տեխնիկայի, ռադիոյի և հեռուստատեսության զարգացման գործում։

Հայաստանի գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության և շինարարական նյութերի արդյունաբերության համար կարևոր նշանակություն է ձեռք բերում արդյունաբերական միներալային հումքի դարձյալ մեկ նոր տեսակի՝ նեֆելինային սիենիտների արդյունաբերական կոմպլեքսային օգտագործումը, որոնց պաշարները ռեսպուբլիկայում գործնականորեն անսպառ են։

Ներկայումս ավարտվում է նեֆելինային սիենիտների բազայի վրա Ախտայի լեռնա-քիմիական կոմբինատի շինարարության նախագծման աշխատանքը։ Այդ կոմբինատը պետք է թողարկի ոչ միայն կավահող, պորտլանդ ցեմենտ, այլև այնպիսի արժեքավոր պրոդուկտներ, ինչպես՝

պղտաշ, մաքուր կայծքարահող, սպիտակ մուր, նաև կալցիումի մետասիլիկատ, նատրիումի մետասիլիկատ, «Երևանիտ» կիսապրոդուկտը, որոնք, բացի ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերում իրենց ունեցած ուղղակի կիրառությունից, հումք են հանդիսանում բարձրորակ ապակե առարկաների ստացման համար, ներառյալ էլեկտրալամպերի ապակին և բյուրեղապակին, հախճապակին և ճենապակին, ռետինատեխնիկական առարկաները, առարկաներ կիսահաղորդիչային արդյունաբերության համար և այլն։ Պղնձի, մոլիբդենի, ալյումինիումի և այլ գունավոր մետաղների արտադրության ընդլայնումը, արդյունահանվող հանքանյութերից բազմաթիվ հազվագյուտ և ցրված էլեմենտների ու կիսահաղորդիչների հանումը կարևոր գործոն կհանդիսանա Հայաստանի էլեկտրատեխնիկական և ռադիո-տեխնիկական արդյունաբերության, սարքաշինության, ռելեների, բարդ էլեկտրոնային մաթեմատիկական հաշվիչ մեքենաների և արտադրության կառավարման մեքենաների թողարկման հետագա զարգացման գործում։

Բնակարանային շինարարության վերաբերյալ պարտիայի նախագծած լայն ծրագիրը և արդյունաբերական ու գյուղատնտեսական շինարարության մեծ ծավալը հատուկ սրությամբ դնում է զանազան շինարարական նյութերի՝ քարի, ցեմենտի, կրի, երկաթբետոնի կոնստրուկցիաների, սանիտարական հախճապակու և այլնի արտադրությունն ամեն կերպ ընդլայնելու հարցը։ Ելնելով դրանից, յոթնամյա պլանում նախատեսված են այդ կարևոր խնդիրների կենսագործման միջոցառումները։ Բնական շինարարական քարի՝ տուֆի թողարկումը ավելացնելու հետ միասին, նախատեսվում է քարհանքերի տուֆի ռեզերվներից պատրաստած որմնաբլոկների արտադրության կազմակերպումը, Արարատի ցեմենտի գործարանի ընդլայնումը, երկաթբետոնի, կրի, հախճապակու և ապակե տարայի նոր գործարանների շինարարությունը։

Ժողտնտխորհի սննդի և մսի-կաթի արդյունաբերության աշխատողների առաջ դրված է բընակչությանը սննդի լավորակ մթերքներով ապահովելու հարցը։ Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների հետ միասին, Ժողտնտխորհի սովխոզները ամեն կերպ ընդլայնեն գյուղատնտեսական հումքի՝ խաղողի, պտուղների և բանջարեղենի արտադրությունը, զարգացնեն անասնապահությունը, ավելացնեն մսի, կաթի և անասնապահության մյուս մթերքների ապրանքային թողարկումը։

Դրա հետ միասին մենք պետք է մոտակա մի քանի տարվա ընթացքում գործող ձեռնարկությունների վերակառուցման և նորերի շինարարության միջոցով գործի դնենք նոր կարողություններ՝ պահածոների արդյունաբերության, գինեգործության և կոնյակի արտադրության մեջ, ընդլայնենք պանրի, ձեթի գործարանների և բանջարեղենի ու խաղողի սկզբնական վերամշակման կետերի ցանցը, ավելացնենք հանքային ջրերի լցումը, հրուշակեղենի և ծխախոտի ապրանքների արտադրումը։

Պարտիայի կողմից Ժողտնտխորհի առջև դրված խնդիրների լուծումը պարտավորեցնում է մեզ՝ բազմակողմանիորեն բարելավել տեղերում արտադրության կազմակերպումը, ավելի լրիվ բացահայտել և ավելի նպատակահարմար կերպով օգտագործել ներքին ռեզերվները, բարելավել և կատարելագործել Ժողտնտխորհի ճյուղային վարչությունների և ապարատի աշխատանքը։